Շարական XVII դարի Ս. Էջմիածնայ մատենադարանում

Ամենից ծանր ու պատուաբեր պարտականութիւնն ընկնում է հարկաւ Էջմիածնում հիմնված, Վեհ Կաթողիկոսի հովանաւորութեան տակ գործող կենդրոնական Յանձնաժողովի վրայ, որի ծրագրած պայմաններում տեղի է ունենալու տօնակատարութիւնը։ Նրա խելացի և եռանդուն գործունէութիւնից է կախված տօնի յաջողութիւնը։ Նա շատ գործ ունի կատարելու՝ որպէս զի այս հազուադէպ, պանծալի, համազգային յոբելեանները արժանավայել կերպով տօնվեն և իրանց ցանկալի բարոյական և կուլտուրական հետքը թողնեն մեր կեանքում։

Ստ. Մալխասեանց

## ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԲԱՐԵԿԱՐԳԵԼ

Մի հաւաքական, համակրելի և գաղափարական յոբելեան ենք սկսում կատարել այսօր՝ հայ տառերի գիւտի 1500 ամեակի եւ հայկական տպագրութեան 400 ամեակի։ Սա ամեն կողմով բարձր է այն բոլոր յոբելեաններից, որ մենք մինչև այժմ կատարել ենք. սա ոչ առանձին անհատի է վերաբերում, ոչ էլ մասնաւոր հիմնարկութեան, սա ընդհանրական է, համազգային։ Այս յոբելեանով մենք գալիս ենք մեր երախտագիտական յարգանքը մատուցանելու այն անմահ հոգիներին, որոնք տուին մեզ մեր ազգային գոյութիւնն ապահովող այդ հզօր գործօն ֆակտորներից մէկը։—Եւ ահա այդ նուիրական տօնի առաջ մենք մեզ, բնականաբար, բարոյապէս պարտաւոր ենք համարում մի որ և է նշանաւոր գործով յաւերժացնել այդ թանկագին յոբելեանը։ Երկար ժամանակ է արդէն, որ մեր պարբերական մամուլը քննադատութեան նիւթ է դարձրել այդ յոբելեանը, կապելով դրա հետ դպրոցական ու գրականական փոնդերին վերաբերեալ խնդիրները։



Ս. Էջմիածին. Հայրիկեան մատենադարան։

Դրանք իրանց կարգին։

Սակայն մենք սրանով ուզում ենք կրկին յիշեցնել մի, ըստ երեւոյթին, աննշան, բայց իրօք խիստ մեծ կարեւորութիւն ունեցող խնդրի մասին, որն իբրև մի անբուժելի խրոնիքական հիւանդութիւն ժամանակ առ ժամանակ երեւան է գալիս մեր մամուլի էջերում, աղմկում, իր գոյութեան մասին յիշեցնում և դարձեալ մոռացութեան մատնւում և անյայտանում...

Ն. Նախիջեւան. Ս. Խաչ վանքը

Նշանաւոր 1860 Թ. իր տպարանով։

Դա մեր տառերի վերանորոգման խնդիրն է։ Շատ է հնացել անմահ Մեսրոպի սքանչելի ստեղծագործութիւնը—մեր այբուբենը. նա պէտք ունի զտման, պարզութեան և կատարելագործման։ Նրա մէջ մտցրուած է չափազանց շատ պայմանականութիւն, խիստ շատ է դժւարացել նրա ուսուցումը, տիրապետումը, ուղղագրութիւնը։ Առաջ են եկել ուղղագրութեան այլ և այլ հերձւածներ, որոնք ապացոյց են, թէ այլ եւս անհրաժեշտ է հարկաւոր ռեֆորմը։ Ահա քառորդ դար է, որ կատաղի բանակռիւների նիւթ է ծառայում ու-ի, ւ-ի և վ-ի հարցը և նա սակայն դեռ շատ հեռու է իր բաւարար լուծումն ստանալուց։ Գրողը շարունակ կանգնած է լինում ո-ի և օ-ի, հ-ի և յ-ի, ե-ի և է-ի, ճ-ի և ջ-ի, ծ-ի և ձ-ի անվերջ առեղծւածների առաջ։ Երբեմն մի հնչիւնի համար ունենք երկու տառ (վ. ւ),